ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/06

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ «Լիանա Կաչյանց» ՍՊԸ-ի տնօրեն Լ.Կաչյանցի (պետական գրանցման համար 271.020.01763)

Քննելով «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՔԶԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-19/3» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում «Լիանա Կաչյանց» ՍՊԸ-ի կողմից 16.04.2019թ. ներկայացված և 19.04.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/06 բողոք) և կից փաստաթղթերը՝ պարզեցի հետևյալը.

1. «Լիանա Կաչյանց» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Լիանա Կաչյանց» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 16.04.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը՝

«Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ ՓԲԸ-ն քիմիական նյութերի» ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել «ՔԶԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասին /փաստաթղթային ձևով/, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2019թ. մարտի 04-ի թիվ 2 որոշմամբ, որի հրավերի թիվ 38-րդ չափաբաժնով պահանջվում է «Ախտահանիչ խտանյութ» 1լ տարողությամբ՝ 30 հատ:

2019թ. մարտի 18-ին կայացած նիստում «ՔԶԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կազմել է թիվ 3-րդ արձանագրությունը, որի թիվ 3-րդ կետով «ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ի հայտում հրավերի թիվ 38-րդ չափաբաժնի մասով առանձնացված տողով ԱԱՀ-ի գծով հաշվարկել է վճարվելիք գումարի չափը:

2019թ. մարտի 22-ին կայացած նիստում «ՔԶԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կազմել է թիվ 4-րդ արձանագրությունը, որի թիվ 3-րդ կետով հրավերի թիվ 38-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչել «ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ին:

Ընկերությունը հայտնել է, որ 2019թ. մարտի 26-ին «ԼԻԱՆԱ ԿԱՉՅԱՆՑ» ՍՊԸ-ն դիմել է «ՔԶԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և տեղեկացրել, որ «ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ի հայտը հրավերի թիվ 38-րդ չափաբաժնի մասով կազմված է գնումների գործընթացները կարգավորող մի քանի իրավական ակտերի պահանջների խախտումներով, ուստի ենթակա է մերժման:

Ընկերության կողմից որպես բողոքի իրավական հիմքեր և հիմնավորումներ նշվել է հետևյալը.

1) Համաձայն «Արտաքին Տնտեսական Գործունեության Ապրանքների միասնական Անվանացանկ»-ի՝ախտահանիչ միջոցները դասվում են 380894 դասակարգիչով՝

ԲԱԺԻՆ V I Քիմիական և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք

ԽՈՒՄԲ 38

ԱՅԼ ՔԻՄԻԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ

Ենթադիրքերի ծանոթագրություններ՝

Ծածկագիր Դիրքի անվանումը

3808 94 – ---------ախտահանող միջոցներ՝

3808 94 100 0 – – ------- չորրորդային ամոնիակային աղերի հիմքով –

3808 94 200 0 – ------- – հալոգենացված միացությունների հիմքով –

3808 94 900 0 – ------- – այլ –

2) Համաձայն՝ «ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ՝ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ԱՅՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՑ ՆԵՐՄՈՒԾՈՒՄՆ ԱԶԱՏՎԱԾ Է ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻՑ» ՀՀ Օրենքի հոդված 1-ով հաստատված ցանկի՝

«3808 94 ԱՏԳ ԱԱ ծածկագիրը կրող «Ախտահանող միջոցներ»-ը ՀՀ տարածք ներմուծման ժամանակ ազատված են ԱԱՀ վճարելուց»:

3) Համաձայն՝ ՀՀ «ԱԱՀ-ի մասին» օրենքի թիվ 1 հոդվածի՝ Հոդված 1. Ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ) անուղղակի հարկ է, որը սույն օրենքի համաձայն վճարվում (գանձվում) է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում:

4) Համաձայն՝ ՀՀ «ԱԱՀ-ի մասին. օրենքի թիվ 15 հոդվածի սահմանման՝

Հոդված 15. ԱԱՀ-ից ազատելը՝ հարկվող շրջանառության նկատմամբ այն չհաշվարկելն է: ԱԱՀ-ից ազատվում են.....

5) ԱՏԳ ԱԱ դասակարգչի 8432, 8433, 8434, 8436, 8701 ծածկագրերին դասվող տեխնիկայի և մասերի, 31 ապրանքախմբի ծածկագրերին դասվող պարարտանյութերի, 3808 91, 3808 92, 3808 93, 3808 94, 3808 99 ապրանքախմբի ծածկագրերին դասվող թունաքիմիկատների, գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա

տնկարկների սերմացուների և տնկանյութի, ինչպես նաև ԱՏԳ ԱԱ դասակարգչի 0106 41 000, 0106 90 00 90, 5305 00 000 0, 9406 00 310 0 ծածկագրերին դասվող ապրանքների իրացումը.

Ընկերությունը նշել է, որ 3808 94 ԱՏԳ ԱԱ դասակարգիչ ունեցող ապրանքախմբի ապրանքների՝ ախտահանիչ միջոցների շրջանառությունը ազատված է ԱԱՀ-ից, հարկվող շրջանառության նկատմամբ այն հաշվարկել չի կարելի, ուստի «ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ի հայտում հրավերի թիվ 38-րդ չափաբաժնի մասով առանձնացված տողով ԱԱՀ-ի գծով վճարվելիք գումարի չափի հաշվարկելը չի համապատասխանում ՀՀ «ԱԱՀ-ի մասին» օրենքի թիվ 15 հոդվածի 6-րդ կետի սահմանումների պահանջներին:

4) Համաձայն՝ ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման թիվ 67 կետի սահմանումների՝ «Գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է»:

Ընկերությունը ներկայացված բողոքով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է՝ դադարեցնել «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ ՓԲԸ-ի «ՔԶԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2019թ. մարտի 22-ի թիվ 4 արձանագրության թիվ 3-րդ կետով հրավերի թիվ 38-րդ չափաբաժնի մասով «ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումը, և, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով՝ պարտավորեցնելու «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ ՓԲԸ-ի «ՔԶԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ ՓԲԸ-ի «ՔԶԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-19/3» ծածկագրով գնանշման

հարցման ընթացակարգի թիվ 38-րդ չափաբաժնի մասով «ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 22.04.2019թ. ժամը 12:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով հայտնել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>«Քանաքեռ-Զեյթուն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Քանաքեռ-Զեյթուն» ՓԲԸ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն ԳԲՔԱ-ՆԳ-2019/06 բողոքի շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել «ՔԶԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 22.04.2019թ. ժամը 12:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/06 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2019/06 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Քանաքեռ-Զեյթուն» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կողմից քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՔԶԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-19/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Լեյկո» ՍՊԸ-ն:

2 «Լեյկո» ՍՊԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով Ընթացակարգի 38-րդ չափաբաժնի համար ներկայացրել է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ԱԱՀ բաղադրիչներից բաղկացած գնային առաջարկ հետևյալ տեսքով.

Չափաբաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ* /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
38	Ախտահանի խտանյութ, լ	107250 Մեկ հարյուր յոթ հազար երկու հարյուր հիսուն	21450 Քսանմեկ հազար չորս հարյուր հիսուն	128700 մեկ հարյուր քսանութ հազար յոթ հարյուր

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.03.2019թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 38-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած, իսկ 02.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ նաև ընտրված մասնակից է ճանաչվել «Լեյկո» ՍՊԸ-ն:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Լիանա Կաչյանց» ՍՊԸ-ի 16.04.2019թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «ՔՋԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: ***Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:*** Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

«Քանաքեռ-Զեյթուն» ՓԲԸ-ի կողմից քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՔԶԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-19/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Լեյկո» ՍՊԸ-ն և 38-րդ չափաբաժնի համար թիվ 5 հավելվածով որպես ԱԱՀ գումար ներկայացրել 21 450 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.03.2019թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 38-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած, իսկ 02.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի 5 արձանագրությամբ նաև ընտրված մասնակից է ճանաչվել «Լեյկո» ՍՊԸ-ն:

. Արձանագրում եմ, որ Ընթացակարգի հրավերի 38-րդ չափաբաժնով նախատեսված «Ախտահանի խտանյութ» գնման առարկան ներառված է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհուրդի 16.07.2012թ. թիվ 54 որոշմամբ հաստատված՝ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկում՝ ԱՏԳԱԱ 3808 94 ծածկագրով ախտահանող միջոցներ դիրքի անվանմամբ:

Միաժամանակ արձանագրում եմ, որ «Լեյկո» ՍՊԸ-ն գնային առաջարկում առանձին տողով նախատեսել է նաև պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը՝ 21 450 ՀՀ դրամ, այն պայմաններում, երբ ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 20-րդ կետով ԱՏԳԱԱ 3808 94 ապրանքախմբի ծածկագրին դասվող թունաքիմիկատների օտարումն ազատված է ԱԱՀ-ից:

Վերոգրյալով պայմանավորված, գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, բավարար գնահատելով «Լեյկո» ՍՊԸ-ի հայտը, գործել է ոչ իրավաչափ, քանի որ Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Այսպես վերը նշված նորմերը հստակ սահմանում են, որ այն դեպքում, երբ գնային առաջարկը չի համապատասխանում հրավերի պահանջներին, ապա այն ենթակա է մերժման և տվյալ դեպքում Կարգի 41-րդ կետով նախատեսված շտկման հնարավորությունը չի գործում:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Լիանա Կաչյանց» ՍՊԸ-ի բողոքը սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից բողոքով ներկայացված երկրորդ պահանջին, ապա գտնում եմ, որ այն ենթակա է մերժման, քանի որ Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հրավերի պահանջներին անհամապատասխան ներկայացված հայտերը մերժվում են գնահատող հանձնաժողովի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Լիանա Կաչյանց» ՍՊԸ-ի կողմից 16.04.2019թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի, մասնավորապես.

1. Պարտավորեցնել «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ ՓԲԸ-ի «ՔԶԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 2019թ. մարտի 22-ի թիվ 4 արձանագրության թիվ 3-րդ կետով հրավերի թիվ 38-րդ չափաբաժնի մասով «Լեյկո» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումը:

2. Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ ՓԲԸ-ի «ՔԶԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունելու «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ ՓԲԸ-ի «ՔԶԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի թիվ 38-րդ չափաբաժնի մասով «Լեյկո» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշում կայացնելու վերաբերյալ, մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**